

Հավելված

- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2009 թվականի մարտի 2-ի թիվ 34 որոշման
- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2010 թվականի ապրիլի 13-ի թիվ 149 որոշման
- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ 65 որոշման
- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 277 որոշման
- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2011 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 686 որոշման
- ՀՀ Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարի 2013 թվականի ապրիլի 25-ի թիվ 288-Ա որոշման

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԺՆԻ ՊԵՏԻ

2.1-7

/Ծածկագիրը/

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքապետարանի աշխատակազմի /այսուհետ՝ աշխատակազմ/ սոցիալական հարցերի և ծրագրերի բաժնի /այսուհետ՝ բաժին/ պետի պաշտոնն ընդգրկվում է համայնքային ծառայության առաջատար պաշտոնների խմբի առաջին ենթախմբում:
2. Բաժնի պետին <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով /այսուհետ՝ օրենք/ սահմանված կարգով պաշտոնում նշանակում և պաշտոնից ազատում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի քաղաքային համայնքի ղեկավարը /այսուհետ՝ համայնքի ղեկավար/:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բաժնի պետն անմիջականորեն ենթակա և հաշվետու է համայնքի ղեկավարին և /կամ/ աշխատակազմի քարտուղարին:

